# Միջազգային Ներդրումային Իրավունքի Վերաբերյալ Դատախաղի Կանոններ

## I. Ընդհանուր դրույթներ

### 1. Մրցույթի մասնակցության իրավունքը

1.1. ՀՀ բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավաբանական ֆակուլտետների ուսանողները կարող են մասնակցել դատախաղին: Թիմի մասնակից ուսանողները պետք է ընդգրկված լինեն նույն կրթական ծրագրում՝ առկա կամ հեռակա ուսուցման ձևով, որը հանգեցնում է իրավաբանական բակալավրի հավասարարժեք աստիճանի ստացման:

1.2. Իրավաբանական մագիստրոսի աստիճան ստանալու ծրագրում ընդգրկված ուսանողները կարող են մասնակցել դատախաղին միայն կազմակերպիչների նախնական գրավոր թույլտվությամբ: Նման թույլտվություն ստանալու նպատակով տվյալ ուսանողը պարտավոր է իր ամբողջական ինքնակենսագրականը (CV) ներկայացնել կազմակերպիչների կողմից սահմանված պաշտոնական էլեկտրոնային հասցեին:

1.3. Ասպիրանտուրայի կամ հայցորդության ծրագրում ընդգրկված ուսանողները իրավասու չեն մասնակցելու դատախաղին:

1.4. Այն ուսանողները, ովքեր ունեն փաստաբանի արտոնագիր, ինչպես նաև նրանք, ովքեր ուսանում են Հայաստանի Հանրապետության Փաստաբանական դպրոցում, իրավասու չեն մասնակցելու սույն դատախաղին:

### 2. Մասնակցող թիմերի քանակը

2.1. Համալսարանը ներկայացնող թիմը կարող է բաղկացած լինել նվազագույնը երկու և առավելագույնը չորս ուսանողից: Բացի դրանից, թիմը կարող է ունենալ նաև առավելագույնը երկու մարզիչ:

2.2. Թիմը կարող է մասնակցել նաև առանց մարզիչի/մարզիչների ներգրավվածության, սակայն այդ դեպքում թիմի անդամներից մեկը պետք է հանդիսանա թիմի կոնտակտային անձ, ով պատասխանատու կլինի թիմի և դատախաղի Կազմակերպական կոմիտեի միջև բոլոր հաղորդակցությունների համար:

2.3. Յուրաքանչյուր դատափուլում թիմից առնվազն երկու ուսանող պարտադիր պետք է ելույթ ունենան: Թիմի մարզիչին/մարզիչներին արգելվում է միջամտել դատափուլերի ընթացքում թիմի ելույթին:

### 3. Գրանցման և վերջնաժամկետի մասին դրույթներ

3.1. Յուրաքանչյուր թիմ պետք է լրացնի գրանցման ձևաթուղթը և ներկայացնի այն ստորև նշված վերջնաժամկետին համապատասխան՝ ուղարկելով էլեկտրոնային նամակ

Կազմակերպիչներին: Նամակի “Թեմա” տողում պետք է նշվի թիմի անունը՝ ինչպես նշված է ներկայացված գրանցման ձևաթղթում:

3.2. Ձևաթուղթը ներկայացնելուց հետո Կազմակերպիչները թիմին կտրամադրեն հատուկ համար, որը կօգտագործվի որպես նույնականացման նշան՝ համալսարանական պատկանելությունը բացահայտելու նպատակով չհայտնվելու համար:

3.3. Թիմերի գրանցումները պետք է ներկայացվեն Կազմակերպիչներին՝ լրացնելով ՌՀՀ կայքում տեղադրված ձևաթղթի օրինակը: Դատախաղի թիմերի գրանցման վերջնաժամկետը՝ **01.11.2025թ.**: Թիմերը կարող են մեկ անգամ փոփոխել իրենց կազմը՝ ներկայացնելով նոր ձևաթուղթ մինչև գրանցման վերջնաժամկետը:

3.4. Պարզաբանման հարցումները պետք է ներկայացվեն Կազմկարպիչների էլ.հասցեին մինչև **30.10.2025թ**:

3.5. Փաստարկները թիմը պետք է ուղարկի Կազմակերպիչների էլ.հասցեին մինչև **17.11.2025թ**: Նամակի “Թեմա” տողում պետք է նշվի թիմի համարը: Նախնական փաստարկները չներկայացնելու դեպքում թիմը չի կարողանա մասնակցի դատախաղի այլ փուլերին:

### 4. Մասնակցության վճար

4.1. Մրցույթին թիմերին մասնակցելու համար մասնակցության վճար չի գանձվելու:

### 5. Այլ դրույթներ

5.1. Դատաաղի սույն կանոնները վերաբերում են մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած բոլոր անձանց և թիմերին, ինչպես նաև մրցույթին մասնակցող բոլոր անձանց և թիմերին: Կանոնները ուժի մեջ են մտնում մրցույթի մասին հայտարարության հրապարակման պահից և գործում են մինչև մրցույթի ավարտը: Մրցույթի ավարտից հետո, եթե առաջանում են պարզաբանման կարիք ունեցող հարցեր, դրանք կարգավորվում են սույն կանոնների հիման վրա:

5.2. Կազմակերպիչներն իրավունք ունեն կիրառել, մեկնաբանել և անհրաժեշտության դեպքում փոփոխել սույն կանոնները:

5.3. Կամակերպիչների հետ կապ հաստատել և Կանոններով նախատեսված փաստաթղթերը Կազմակերպիչներին ուղարկել հետևայլ էլեկտրոնային հասցեով՝ ilp@rau.am

## II. Փաստարկներ ներկայացնելու և բանավոր լսումների մասին կանոններ

### 1. Փաստարկների ներկայացում

1.1. Մրցույթին մասնակցող յուրաքանչյուր թիմ պետք է պատրաստի երկու գրավոր փաստարկ՝ որպես հայցվոր և որպես պատասխանող: Յուրաքանչյուր թիմ պետք է իր փաստարկները ներկայացնի Կազմակերպիչներին՝ ուղարկելով էլեկտրոնային նամակ Կազմակերպիչների էլ.հասցեին՝ դատախաղի կանոններով սահմանված ժամկետում:

1.2. Գրավոր փաստարկների տառատեսակը և չափը պետք է լինեն՝

տառատեսակ՝ Times New Roman,

չափս՝ 12,

միջակայք՝ 1,5:

Յուրաքանչյուր գրավոր փաստարկ պետք է ներկայացվի .pdf ձևաչափով: .pdf ֆայլի անվանումը պետք է լինի՝ «CL – [թիմի համար]» կամ «RE – [թիմի համար]»:

1.3. Փաստարկները չեն կարող գերազանցել 2500 բառը: Երկու փաստարկներն էլ միասին (հայցվոր և պատասխանող) չպետք է գերազանցեն 2500 բառը, սակայն թույլատրվում է օգտագործել ավելի փոքր բառերի քանակ:

Բառերի հաշվարկը պետք է իրականացվի Microsoft Word-ի ստանդարտ «Բառերի հաշվարկ» գործառույթի միջոցով:

1.4. Յուրաքանչյուր գրավոր փաստարկ պետք է ունենա երկու շապիկ:

Առաջին էջում պետք է նշված լինի թիմի համարը, ինչպես նաև թիմի անդամների անունները:

Երկրորդ էջը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

(ա) «____[դատախաղի անվանում]____» ՝ մրցույթի տարեթվի նշումով.

(բ) փաստաթղթերի վերնագիրը՝ նշելով, թե արդյոք այն ներկայացված է հայցվոր(ներ)ի, թե պատասխանող(ներ)ի անունից:

## 2. Բանավոր լսումների փուլ

2.1. Յուրաքանչյուր բանավոր լսումների փուլ տևելու է վաթսուն (60) րոպե: Յուրաքանչյուր կողմ կունենա երեսուն (30) րոպե իր ելույթի համար, այդ թվում՝ արբիտրների հարցերին պատասխանելու համար: Բանավոր փուլերից առաջ յուրաքանչյուր կողմ պետք է որոշի, թե ինչպես է ցանկանում բաշխել երեսուն րոպեն իր ներկայացուցիչների միջև և այդ երեսուն րոպեներից քանիսն է ցանկանում հատկացնել արձագանքի կամ հակափաստարկի համար:

2.2. Յուրաքանչյուր փուլի ընթացքում մրցող թիմից առնվազն երկու անդամ պետք է հանդես գան բանավոր ելույթով: Արբիտրները կարող են իրենց հայեցողությամբ երկարաձգել յուրաքանչյուր կողմին հատկացված երեսուն (30) րոպե ժամանակը: Նման երկարաձգում կատարելիս նրանք պետք է հաշվի առնեն հավասարության սկզբունքը:

2.3. Բանավոր լսումների փուլի յուրաքանչյուր լսում անցկացվում է հետևյալ հերթականությամբ՝

- Արբիտրների կողմից լսումների բացում,
- Լսումներ (յուրաքանչյուր հարցի համար)
- Հայցվորի դիրքորոշման ներկայացում,
- Պատասխանողի դիրքորոշման ներկայացում,

- Հայցվորի կողմից արձագանք,
- Հակափաստարկներ պատասխանողի կողմից,
- Նիստի փակում դատավորների կողմից:

2.4. Արբիտրները կարող են միջամտել և հարցեր ուղղել ցանկացած մասնակցի իրենց ելույթի ընթացքում, բացի այն ժամանակից, որը նախատեսված է արձագանքների և հակափաստարկների համար:

2.5. Արձագանքի և հակափաստարկների փուլերում մասնակիցները չեն կարող ներկայացնել նոր պահանջներ կամ պնդումներ: Հակափաստարկի բովանդակությունը պետք է վերաբերի միայն հակառակ կողմի ներկայացրած փաստարկներին կամ դիրքորոշումներին արձագանքի ընթացքում:

2.6. Տեխնիկական սարքերը թույլատրվում են բացառապես ներկայացուցիչների սեղանին, եթե դրանք օգտագործվում են ժամանակի հաշվառման նպատակներով: Եթե ներկայացուցիչները այդ նպատակով օգտագործում են բջջային հեռախոսներ, դրանք պետք է լինեն թռիչքային ռեժիմում (Airplane mode): Ներկայացուցչի կողմից տեխնիկական սարքի օգտագործումը այլ նպատակներով բանավոր ելույթի ընթացքում, մասնավորապես՝ հաղորդագրություններ ուղարկելու կամ կարդալու համար, կարող է հանգեցնել թիմի որակազրկմանը:

Նիստի ընթացքում ելույթ չունեցող անձանց արգելվում է խոսել կամ որևէ կերպ խաթարել կամ խոչընդոտել դատական նիստի բնականոն ընթացքը: Թիմի անդամները կարող են շփվել միայն գրավոր, առանց ընդհատելու ելույթ ունեցող անձանց կամ արբիտրներին:

2.7. Կազմակերպիչները կողմերի համար կնշեն մինչև երեք հիմնական հարց, որոնք անհրաժեշտ է քննարկել բանավոր ելույթների ընթացքում՝ լսումների սկսվելուց 60 րոպե առաջ: Դա ոչ մի կերպ չի սահմանափակում արբիտրների իրավասությունը հարցեր ուղղելու մյուս կողմերի ներկայացրած գործի վերաբերյալ:

2.8. Դատարանը որոշում կկայացնի, թե որ կողմն է առաջինը հանդես գալու լսումների սկզբում, կախված վեճի առարկայից:

2.9. Կիսաեզրափակիչ փուլ կանցնեն լավագույն չորս (4) թիմերը՝ նախնական լսումների փուլերում իրենց ելույթների ընթացքում ստացած միավորների հիման վրա:

2.10. Թիմերի քանակից կամ այլ նպատակահարմարությունից ելնելով, կազմակերպիչները կարող են որոշել նախնական լսումների արդյունքների հիման վրա չկազմակերպել կիսաեզրափակիչ փուլ: Այդ դեպքում եզրափակիչ փուլ կանցնեն նախնական լսումներում լավագույն արդյունքներ ցուցաբերած երկու թիմերը: Նույն քանակությամբ միավորներ հավաքած թիմերի դեպքում նախապատվությունը կտրվի այն թիմին, որը բանավոր փուլում ամենաբարձր միավորներ է հավաքել: Եթե թիմերը բանավոր փուլում նույնպես նույն քանակությամբ միավորներ ունենան, նրանց միջև կկազմակերպվի լրացուցիչ փուլ՝ նախնական լսումների կանոնների համաձայն:

## 3. Միավորների հաշվարկ

3.1. Յուրաքանչյուր բանավոր լսումների փուլում ամեն թիմ կարող է ստանալ առավելագույնը 300 միավոր:

3.2. Միավորների հաշվարկը կատարվում է բանավոր լսումների հիման վրա: Արբիտրները թիմերին կգնահատեն ելույթ ունեցող ներկայացուցիչների իրավունքի գիտելիքների, փաստերի իմացության և փաստաբանական հմտությունների հիման վրա (յուրաքանչյուր կատեգորիայի համար՝ առավելագույն 100 միավոր):

3.3. Յուրաքանչյուր լսումից հետո արբիտրներին տրամադրվում է ժամանակ խորհրդակցելու և ամփոփելու իրենց միավորները՝ առանց հանդիսատեսի ներկայության: Թիմերի միավորները չեն հրապարակվի մինչև մրցույթի ավարտը: Առանձին արբիտրների միավորները և միավորների ցուցակները նույնպես չեն հրապարակվի:

3.4. Կիսաեզրափակչում և եզրափակիչում հաղթող թիմի որոշումը կայացվում է արբիտրների մեծամասնության որոշմամբ:

Եզրափակիչ և կիսաեզրափակիչ լսումներում թիմերի դերերը որոշվում են վիճակահանությամբ, որի կանոնները սահմանվում են կազմակերպիչների կողմից՝ արդարության սկզբունքի հիման վրա:

## 4. Մրցանակներ

4.1. Հաղթող թիմ

Հաղթող թիմը այն թիմն է, որը հաղթում է եզրափակիչում:

4.2. Լավագույն խոսնակ

Լավագույն խոսնակը կընտրվի կազմակերպիչների կոմիտեի կողմից: Լավագույն խոսնակի ընտրությունը կկատարվի խոսնակի իրավունքի իմացության, փաստերի տիրապետման և փաստաբանման հմտությունների հիման վրա:

## 5. Տույժեր

5.1. Յուրաքանչյուր թիմ պարտավոր է ողջ մրցույթի ընթացքում պահպանել պարկեշտ վարքագիծ, կարգապահություն և հարգալից վերաբերմունք բոլոր մասնակցող անձանց նկատմամբ:

5.2. Կազմակերպիչները իրավունք ունեն կիրառել տույժեր մրցույթի կանոնների խախտման կամ անընդունելի վարքագծի դեպքում: Տույժի տեսակը և չափը որոշվում են Կազմակերպիչների հայեցողությամբ՝ հաշվի առնելով խախտման լրջությունը և/կամ դրա արդյունքում թիմին տրված առավելությունը: Տույժը կարող է ներառել թիմի ընդհանուր միավորներից առնվազն մեկ (1) և առավելագույնը հինգ (5) միավորի նվազեցում:

5.3. Կանոնների խախտումը կամ թիմի, նրա որևէ անդամի կամ մարզչի կողմից ակնհայտ անհարգալից վարքագիծը կարող է հանգեցնել թիմի որակազրկման: